



«ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՂԱԴՐԻՉ 2-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

**խոշորացված համայնքներում եվ համայնքների խմբերում ենթաձրագրերի**

**Առաջարկների գնահատման չափանիշները**

Չափանիշները	Կշիռը
<b>1 Ծրագրի նպատակները և խնդիրները</b>	<b>5</b>
1.1 Որքանո՞վ հստակ են ներկայացված ծրագրի նպատակն ու խնդիրները:	0,8
1.2 Որքանո՞վ է ծրագիրը համապատասխանում երկրի և մարզի զարգացման ռազմավարությանը և ծրագրերին	0,8
1.3 Որքանո՞վ հստակ են ներկայացված թիրախային խմբերի կարիքները:	0,6
1.4 Որքանո՞վ է ծրագիրը հնարավորություններ ստեղծում խոցելի խմբերի/համայնքների խնդիրները լուծելու համար:	1
1.5 Որքանո՞վ կնպաստի ծրագիրը մասնակից համայնքների կայուն տնտեսական զարգացմանը:	1
1.6 Որքանո՞վ կնպաստի ծրագիրը մասնակից համայնքների տնային տնտեսությունների եկամուտների աճին:	0,8
<b>2 Ծրագրի ընդհանուր կառուցվածքը</b>	<b>7</b>
2.1 Որքանո՞վ տրամաբանական է ծրագրի ընդհանուր կառուցվածքը: Որքանո՞վ հստակ և իրատեսական է ծրագրով և դրա բաղադրիչներով նախատեսվող գործողությունների պլանը, և որքանո՞վ է այն համահունչ ծրագրի նպատակներին, խնդիրներին և ակնկալվող արդյունքներին:	0,6
2.2 Որքանո՞վ հստակ և չափելի են ներկայացված ծրագրի ակնկալվող արդյունքները և ազդեցությունը խոցելի խմբերի/համայնքների վրա:	0,4
2.3 Արդյո՞ք ծրագրի առաջարկը պարունակում է սպասվող արդյունքները գնահատելու չափորոշիչներ՝ մինչև ծրագրի իրականացնելը և դրանից հետո սպասվող արժեքներով	0,6
2.4 Որքանո՞վ են ծրագրի առաջարկում հաշվի առնված արտաքին գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ծրագրի արդյունավետ իրականացման վրա:	0,6
2.5 Որքանո՞վ է ծրագրի առաջարկում հաշվի առնված բոլոր շահագրգիռ կողմերի հնարավոր մասնակցությունը:	0,6
2.6 Որքանո՞վ են ծրագրում ներգրավված առավել խոցելի և/կամ սահմանամերձ համայնքները:	0,8
2.7 Ինչպիսի՞ն է մասնակից համայնքների բնակչության ներգրավվածության աստիճանը ծրագրի ընտրությանը և նախապատրաստմանը:	0,8

2.8	Ինչպիսի՞ն է մասնավոր բիզնեսի և նվիրատուների ներկայացուցիչների ներգրավվածությունը ծրագրի ընտրությանը և նախապատրաստմանը:	0,6
2.9	Որքանո՞վ են ծրագրի բաղադրիչները փոխկապակցված, և որքանո՞վ են դրանք լրացնում և ուժեղացնում միմյանց:	0,8
2.10	Արդյո՞ք ծրագրի առաջարկը պարունակում է լրացուցիչ արժեքային տարրեր (ինչպիսիք են. բնապահպանական խնդիրների լուծում, գենդերային հավասարության և հավասար հնարավորությունների խթանում, անդրադարձ հաշմանդամների կարիքներին, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն և այլն), նորամուծություն կամ հաջողված գործելակերպ, որը կարող է ընդօրինակվել այլ համայնքների ծրագրերում:	0,6
2.11	Որքանո՞վ արդյունավետ են կիրառվող տեխնիկական լուծումները: Կիրառվո՞ւմ են արդյոք նորարարական և/կամ էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ:	0,6
<b>3</b>	<b>Ծրագրի կենսունակությունը</b>	<b>4</b>
3.1	Ֆինանսական կենսունակություն. Որքանո՞վ է իրատեսական և հիմնավորված առանձին բաղադրիչների շահագործման և պահպանման ֆինանսական պլանը՝ ծրագրի ավարտից հետո հինգ տարիների համար	0,8
3.2	Ինստիտուցիոնալ կենսունակություն. Որքանո՞վ իրատեսական է այն ինստիտուտների գործունեության շարունակականությունը, որոնք կապահովեն ստեղծված ենթակառուցների շահագործումն ու պահպանումը, և ծառայությունների մատուցումը:	0,8
3.3	Ազդեցություն շրջակա միջավայրի վրա. Որքանո՞վ ծրագիրը կունենա կայուն դրական ազդեցություն շրջակա միջավայրի վրա	0,8
3.4	Սոցիալական ազդեցություն. Որքանո՞վ արդյունավետ են ծրագրի հնարավոր սոցիալական ռիսկերի (օրինակ, նախատեսված հողատարածքի ժամանակավոր կամ մշտական օգտագործման կամ ձեռքբերման հետ կապված ռիսկեր, բացասական ազդեցություն մասնավոր սեփականության կամ բիզնեսի վրա, և այլն) մեղմելուն կամ բացառելուն ուղղված միջոցները:	0,8
3.5	Ծրագրի որևէ մի բաղադրիչի խափանման դեպքում, որքանո՞վ կենսունակ են մյուս բաղադրիչները:	0,8
<b>4</b>	<b>Ծրագրի ֆինանսավորումը, բյուջեն և ծախս-արդյունավետությունը</b>	<b>4</b>
4.1	Որքանո՞վ լիարժեք են ներկայացված բաղադրիչների շրջանակներում նախատեսվող գործողությունները ծրագրի բյուջեում:	0,8
4.2	Ինչպիսի՞ն է ծրագրի բյուջեի ծախսերի և ակնկալվող արդյունքների միջև հարաբերակցությունը (ծախս-արդյունավետության գնահատում):	1
4.3	Որքա՞ն է ներգրավված մասնավոր բիզնեսի և նվիրատուների համաֆինանսավորման չափը ծրագրում:	1
4.4	Որքա՞ն է ներգրավված համայնքների բյուջեներից համաֆինանսավորման չափը ծրագրում:	0,6
4.5	Ինչքանո՞վ իրատեսական է ծրագրի շահառուների / թիրախային խմբերի կողմից համաֆինանսավորումը և որքա՞ն է դրա չափը:	0,6